ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3120-Ա « 04 » օգոստոսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի Հ.2911-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ Հ.62 ԵՐԹՈՒՂՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, 11-րդ հոդվածի 6-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի 17.07.2025թ. h.Ն/40389-25 գրությունը.

1.Երևանի քաղաքապետի 2012 թվականի մարտի 30-ի «Երևան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցը հաստատելու մասին» h.2911-Ա որոշման N 2 հավելվածում ընդգրկված միկրոավտոբուսային h.62 երթուղին շարադրել հետևյալ խմբագրությամբ.

62	ՔԱՆԱՔԵՌ – ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ Քանաքեռի 14 փ. (ս.կ.) – Զ.Քանաքեռցու – Ֆանարջյան – Կ.Ուլնեցու – Ներսիսյան փ-ներ – Ազատության պ. – Բաբայան – Դավթյան – Արաբկիրի 17-րդ - Ռիգայի փ-ներ - Սարալանջի նոր խճ. – Սարալանջի – Տերյան փ-ներ – Աբովյան պուր. – Աբովյան - Կորյունի – Չարենցի փ-ներ – Սայաթ Նովայի - Մաշտոցի պ-ներ – Խորենացու - Բեյրութի – Սրբ. Գր.Լուսավորչի փ-ներ – Երևանի քաղաքապետարան (վ/կ): Հետադարձը՝ Սրբ. Գր.Լուսավորչի փ.– Մաշտոցի պ. - Սարյան – Մոսկովյան փ-ներ – Մարշալ Բաղրամյան – Սայաթ Նովայի պ-ներ – Չարենցի – Հերացու փ-ներ – Սարալանջի նոր խճ. – Ռիգայի - Արաբկիրի 17-րդ - Դավթյան – Բաբայան փ-ներ – Ազատության պող. – շարունակությունը նույն ուղեգծով:	31.5	105	18.0	7	8	15	7/4/2 5/3/1	Երթուղու ուղեգծի փոփոխու-թյուն

2.Հանձնարարել «Երևանտրանս» և «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ կազմակերպել Երևանի ներհամայնքային միկրոավտոբուսային հ.62 երթուղու աշխատանքը՝ սույն որոշմամբ սահմանված ուղեգծով:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246